

Պարտք կը համարինք հրապարակաւ յայտնել մեր խորին շնորհա-
կալութիւնները այն ամէն պատ. Հայ Թերթերու և մեր ազնիւ Բարեկամնե-
րուն, որոնք փութացին իրենց սրտագին ցաւակցութիւններն հասցնել մեզ՝
Միաբանութեանս ողբալի և անգին կորուստին առթիւ, զոր ունեցաւ յան-
ձին Ուխտիս Ամենապատիւ բազմավաստակ Պետին

ԳԵՐՊ. ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ԿԻՐԵՂԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — ԱԲԲԱՆՈՐ

Փոխադարձ ի սրտէ կը մաղթենք ամենուն երջանկաւէտ յաջողակից
և ուրախ տարիներ....

ԻՐՐ ՆՍՈՅՇ

«ԲԱԶՄԱՎԷՊ» ի յունուարի այս Թիւր կը
դրկենք առ հասարակ այն ամէն անձանց՝
որոնք արդէն բաժանորդ էին 1921ի մեր
ամսաթերթին։ Որոնք որ ցարդ չեն նորո-
գած իրենց բաժանորդագրութիւնը ներ-
կայ տարւոյս համար՝ հաճին անմիջապէս
խնցնել մեզ եւ կրկնել իրենց հասցէն, ղըր-
կելով միանգամայն բաժնեգինը ֆր. գաղղ.
25. տոլ. 5 ԿԱՆԻԻԿ։

Իսկ այն ամէն բաժանորդները, որոնք
դեռ չեն վճարած 1921ի իրենց բաժնեգին-
ները՝ կը խնդրուին փութով փակել իրենց
հաշիւը խմբագրութեանս հետ։

«Բազմավէպ» ի յաջորդ Թիւերը պիտի
ստանան մի միայն անոնք՝ որոնք կը փու-
թան գոհացուցիչ պատասխան մը տալ մեր
ներկայ ԱԶԴին։

ԱՐԵԳ

ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ ԱՍՍԱԳԻՐ

1922 Թուականին յունուար ամսից Վիեն-
նայում հրատարակուելու է գրական-գի-
տական ամսագիր Արեգ անունով, Սիմէոն
Յակոբեանի (Յերունի) խմբագրութեամբ։
Ամսագիրը պիտի բովանդակէ գրական
էջեր եւ քննադատական ուսումնասիրու-
թիւններ՝ արեւմտահայ, արեւելահայ, Եւրո-
պական եւ ուսական գրականութիւններից։
«Արեգ»-ը կը հրատարակուի մօտաւորա-
պէս 64—70 մեծադիր էջերով։
Կիսամսեայ բաժանորդագինն է՝ 15 ֆր-
րանկ։ Ամերիկականի համար 1.50 տոլլար։

Գիտել՝

Rédaction «Areg», S. Hagopian

VIENNE (Autriche), VII. Mechitaristengasse 4.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

«Բազմավէպ» ի ներկայ Թուոյն հետ, ինչպէս խոստացիր էինք, կը զրկենք մեր
բաժանորդներուն Ուխտիս բարեխիշատակ Արհի Գերպ. իգն. Կիւրեղեան Արքահօր մա-
հուան քրթիւ նոր լոյս տեսած պատկերազարդ Յաւելուածը։

Այդ ի գիտութիւն կը ծանուցանենք այն ամենուն, որոնք կ'ուզեն ամբողջական
ունենալ Բազմավէպի հաւաքածոն, թէ սոյն պրակը՝ որքան որ անշատ լոյս կը տեսնէ,
սակայն մաս կը կազմէ Բազմ. ի յունուարի Թուոյս։